

նական թերթերն ոչ ձայն և ոչ կարծիք ունին։ Բայց նախ հիմը հաստատուն բռնանք և յետոյ զարգերու և զբուսեցնելու պարապինք։ Չառնեք չպահարակներ ժամանակակից գիտութիւնը և անոր ծնած մեծ յառաջդիմութիւնը։ Բայց և վարպետ ըլլանք գիտութեանց այն մասերն միայն իւրացրելու, որ հայութիւնը կը զարգացնեն և մեր պիւրաբեկ կազմուածքին չեն փեսաներ։ Մասնաւոր ազատ է վատն ու բարին սերմանելու մեր հասարակութեան մէջ։ և ռամկին մէջ աւելի շարն ու փեսասկարը շուտով ճարակ կը գտնեն։ և ժողովուրդը կը գայլթակղի և ասոր միտքը շինելու համար, կարեւոր է որ մեր կրօնական թերթերը գրին շարժեն։ և փոխանակ ապագրին և կամ ոչ այնքան կա-

րեւոր ինդիքներու և վիճերու հետ պարապելու, ջանան շնապաշտական իմաստասիրութեան առջեւ՝ անասանելի պարիսպ մը կանգնել կրօնքի իմաստասիրութիւնը՝ զարգարուած գիտնական և իմաստասիրական զօրեղ փաստերով։ և այն ատեն հայրենի կրօնքը ոտնակոխ ըլլալու վտանգէն կ'ազատի, և կրօնքը ապրիով, կ'ապրի և հայուն թիւը։ առանց միոյն չկայ միւսը և միոյն բարձմամբ՝ ջնջուած է միւսը։ Մենք յարգենք մեր զարաւոր գոյութեան ամենէն ազնիւ յատկութիւնը՝ կրօնական և հոգեկան լիւնելը։ զայս կը ներշնչեն նոյն իսկ մեր ամենէն ազատամիտ թերթերն։ գրկենք հոգւային ազնիւր՝ կրօնքը, և յարկենք յառաջ գիտութեան վեմը՝ գիտութիւնը։

Հ. Ս. ՆՐԻՄԵԱՆ



ԱՐՇԱԼՈՅՍ

ԳՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Շար. տես էջ 289)

Է.

Հիւսմանք քրիստոնէութեան յ'Բ եւ յ'Գ Դարս. — Նախատակք ի Փոքր Հայս. — Մեղրուծան Եպիսկոպոս Հայոց.

ԲԱՆԱՍԵԱՆ քրիստոնէութեան հետքը փնտռել ի Մեծ ի բուն Հայս՝ կըրնար չիւրին ըլլալ, եթէ ասոնց քաղաքական պատմութիւնն այլ պայծառ ըլլար Բ և Գ դարուց մէջ։ յորս՝ որչափ այլ Խորենացի կարգաւ ազգաբանէ մեր Արշակունի Թագաւորները՝ Սանարուկէն մինչեւ ի Տրդատ (200 կամ աւելի տարի), սակայն յոյն և լատին ժամանակակից կամ մերձաժամանակ պատմիչք՝ ուրիշ հայ Թագաւորներ այլ յի-

շեն։ Սասանեան Պարսից ծագումն և հաւատարմութիւնն ընդ Հայոց՝ գրեթէ Գ դարու սկիզբներէն՝ մեծ վրդովման և շփոթութեան պատճառ եղաւ, և ոչ միայն քաղաքական գործք ի միման միացին, այլ և քրիստոնէութիւնն այլ ծածկուեցաւ, կամ լաւ եւս ըսենք՝ անծանօթացաւ։ մինչդեռ Փոքր Հայք Հռովմայեցուց հաստատ տէրութեան ներքեւ ըլլալով՝ տեղւոյն դէպքերն այլ ծանօթագոյն են, նա և քրիստոնէութեան նկատմամբ՝ որ է այժմ մեր ինդիքն։

Փոքր Ասիայ մէջ երեք ընդարձակ նահանգք կամ աշխարհք՝ գոտտ Հայք կոչին, Ա, Բ, Գ, որոց բնակիչք մեծագոյն մասամբ Հայք էին, ոչ փոքր մասամբ նա և ասորցիք գուրս եղած Կապպադովիոյ կամ Գամրուց մէջ, այլ և ի Պոնտոս և ի Փոնդգիա, ուր շատ Սուրբ նահատակք եղած են։ և յատուկ Հայոց քաղաքք կոչուածք, ինչպէս՝ Կումանա Հայոց, Մելիտոսիէ Հայոց, Նիկոպոլիս Հայոց, Սատաղ, և այլն։ Թէ ասոնց մէջ թէ մերձաւորաց՝ աւելի կամ պակաս նշանաւորաց, որպիսիք են Կեսարիա (ի Հայքն Առաջին), Սեբաստիա (յ'Բ Հայս), Արտաշ, Արարիստ, Ամասիա, Երասայիտա, Նեոկեսարիա, և այլն, (որոց ոմանց անուանքն հայաձայն հնչեն), այն երկուց (Բ, Գ) դարուց մէջ, մանաւանդ ի կէս Գէն և ի սկիզբն Գէն, կըրնանք ըսել անթիւ վկայք եղած են, ո-

րոց ոմանց նոյնպէս յայտնի հնչին հայ ա-
նուանքն. ոմանք այլ իրենց վկայակից Յու-
նաց անուամբ այլապէս կամ բոլորովին յու-
նացեալ: Քրիստոնէութիւնն՝ մանաւանդ այն
գարեթունն՝ ազգ և լեզու չէր խորհրդ, այլ
միայն հաւատք ի Քրիստոս. առ որ, ըստ Ա-
ռաքելոյն (Պողոսի) ամենքն այլ, յոյնն այլ՝
խուժ գոժնն այլ՝ հաւասար են: Այդ վկայից
բազմութիւնն և տեղեաց մօտաւորութիւնն ի
Մեծ Հայս՝ մեծ փաստ մի եւս ընծայեն, թէ
մեր այս բնաշխարհին մէջ այլ կար այն ա-
նունք քրիստոնէութիւն, և հարկաւ եղած են
և վկայեց, որոց պատմութիւնը՝ զստ յայլոց,
ինչպէս առաջ յիշեցինք, զբաժ է եղեր մեր
գրացի Աշխարհոյ եպիսկոպոսն Փլորմ/իխանոս,
ի կէս Բ դարու: Այժմայն դժար է ճշգիւ
այն Սրբոց վկայից ազգութիւնը և նահա-
տակութեան հանգամանքը, այլ և կըրնայ
հեռացընել զմեզ մեր նպատակէն. սակայն
և բոլորովին զանց առնել՝ գուցէ աւելի դժար
է քրիստոսասէր և վկայասէր գրչի և ըն-
թերցողի, երբ այնպիսի անձանց վրայ է
խօսից կարգն, որք աշխարհիս կամ մարդ-
կութեան գերազույնքն եղած են. զի, ի՞նչ քան
զմարտիրոսութիւն վեհագոյն և արիական
գործ. և ով յոյս ունի զանոնք տեսնելու
որ մի (որ յաւիտենական) յաստուածային
փաստ, վայլէ որ գոնէ քիչ մ'այլ ճաննայ
զանոնք այս կենաց կտորն օրուան մէջ, ըն-
տանենայ անոնց, և ստոյգ պարծանք հա-
մարի իրեն՝ զհայրենակիցսն երկրի և զոչ
հայրենակիցս, համահաւասար հոգեկիցս ու-
նենալ յերկինս: Այս զգացմամբ, որոյ հաղորդ
ճաննամ զազնուագութ ազգակիցս, արժան
համարիմ գոնէ համառօտիւ և երբեմն ա-
նուամբ շարի՝ նշանակել ի հազարաց և ի
բիւրոց՝ քանի մի յայն սուրբ նահատակելոցն
ի վերոյիշեալ քաղաքս Հայոց և անոնց
մերձաւորաց, սկսեալ այն ժամանակէն՝ ուր
թողցնէք մեր պատմութիւնը, Սուքիստանց
և Արարատեան վկայից յիշատակօք. թողլով
սրբասիրաց՝ անոնց նուիրեալ յատուկ գրոց
(Վարդու Սրբոց և Յայտաւորաց) մէջ ա-
ւելի ծանօթանալ իրենց սիրածնուն:

Քիչ մի վերը յիշուած վերջին վկայից
ժամանակակից՝ Ագրիանոս կայսեր տունն
(117-8ին) ի Եկեսարիա՝ ազնուական մի՝ Եւպ-

սիկ (Eupsichius) գուցէ Յռասիկ անուամբ,
(որպէս էր և բնիկ անունն Ս. Եռաստատիոսի)
քրիստոնէութեանն համար՝ բռնուած դա-
տուած, և բանտուած, յետ համբերելու նե-
ղութեանց, արձակուեցաւ. բայց մարտիրո-
սութեան փափաքն և պատկը նորէն ստացաւ.
ունեցած ստացուածքն երկու բաժնելով և
մին աղքատաց բաժնելով, միւս մասը՝ գե-
րագոյն առաքինութեամբ՝ տուաւ զինքը մատ-
նողներուն, որ նորէն մատնեցին Սապրիկ
(Sapricius) դատաւորին կամ քաղաքապե-
տին, (որոյ անունն այլ հայերէն հնչէ), յայց
Հռովմայեցոց հաւատարիմ Հայածիշ, շատ
Քրիստոսի հաւատարիմներ չարաչար տանջա-
նք նահատակեր է. զայս սուրբ վկայս այլ
յետ գրեթէ մարմինը պատառտելու՝ զլիա-
տելով. ասոր յիշատակն կատարուի սեպ-
տեմբ. 7. -- Աւրիշ համանուն և կենսարացի
վկայ մի եւս կայ ի Պ դարու, ազնուական
և նոր փեսայ երիտասարդ մի, որ՝ Բաղդի
տաճարը կործանելուն համար՝ Ուրացոց Յու-
լիանու հրամանաւ՝ ուրիշ շատ հաւատացե-
լոց հետ չարչարուելով նահատակեցաւ. ու-
րացոցն կու ստիպէր որ նորէն կանգնեն դառ-
նաճը, բայց քրիստոնէաբք անոր տեղ եկե-
ղեցի մի կանգնեցին, յորում՝ Մեծն Բարսիդ
ներբողեց զՍ. վկայն. որոյ յիշատակն դրուած
է յ'9 ապրիլի և 7 յուլիսի:

Բ դարուն կիսում Հայածանք քրիստոնէից
աստուկացեր են, Մարկ. Աւրելիանոս կայսեր
ատեն, որ փիլիսոփայ և խոհեմ մարդ մի
հռչակուէր, և իբր երկիւղածութեամբ ի դից՝
թոյլ տուած է, կ'ըսեն. ոմանք, այդ հալա-
ծանքը, յամօթ իր իմաստասիրական առա-
ծից: Չատ յայլոց՝ Կոմանա Հայոց քաղաքն՝
ընծայած է Քրիստոսի՝ Հերմիանոս անուամբ
կտրիճ զօրական մի, շատ տանջանք և ա-
րեամբ չարչարեալ. որոյ քրիստոնէական ա-
րիւթեմնէն յաղթուեցաւ իր դահլիճն այլ և
հաւատաց ի Քրիստոս. յիշատակն դրուած
է յ'13 մայիսի:

Այս ժամանակիս հետաքննական գէպք մի
և հայանուն քրիստոնէայ ազնուական անձ
մի յիշուի՝ Հայոց երկրէն քիչ հեռի. օտարաց
ծանօթ, Ս. Աբերկիոս (Abercio, փռ. A-
brece) եպիսկոպոսն Յերապոլի ի Փ. Արիա,
քրիստոնէից պաշտպանութեան թուղթ մի

գրելուն համար առ Մարկ. Աբրեղ. բայց իր վարքը չեն գիտեր. ընդ հակառակն մեր Յայտմաւուրք երկար և քիչ մ'այլ երկբայեւ լիս պատմեն (22 հոկտ. — Սամի ծԳ)։ Մէկ դէպքն է ի Հոռոմ երթալ և կայսեր դուստրը բռնելն։ Գուցէ ասկէ համարձակած ըլլայ քրիստոնէից շատագովութիւն գրելու։ Մեզի վերաբերեալն է՝ անոր յետ շատ տեղ երթաւ լու գալու քարոզելով, հանդիպելն ի Մծրին քաղաք. « Եւ անդ էր, կ'ըսեն Յայտմաւուրք, « այր մի հաւատացեալ, որոյ անուն էր վա- « ճրամ... (որ) ժողովեաց զամենայն քրիս- « տոնեայսն ի միասին, և միաբան խորհուրդ « արարեալ՝ անուանեցին զԱբրեղիոս՝ հաւա- « սաբ Առաքելոցն »)։ Այս Սուրբս դարձեր է իր երկիրը և հօն վախճաներ է։

Ի սկզբան Գ. դարուն (204) ի Կոմանա Հայոց՝ նահատակուած է քաղքին եպիսկոպոսն Չոտիկ, Թերեւս և Չատիկ, ըստ լատինաց Zoticus, եռանդուն քաջահաւատ անձն. որ բանիւ և գրով կուռեր և յաղթաւարիբր է զՄոնտանեան ցնորեալ աղանդաւորս, և արեւմբն կնքեր է յաղթանակը։ Գրուածներն գովուած՝ բայց չեն հասած մեզի։ Իր յիշատակն դրուած է ի 21 յուլիսի¹։

Այս յիշատակ Հայոց (Կոմանայ) քաղաքի եպիսկոպոսին դրդէ զմիտս, թէ չկայի՞ն և ի բուն Մծէ Հայս՝ եպիսկոպոսը, առաջնորդք եկեղեցեաց կամ քրիստոնէից, որչափ այլ ծածուկք էին։ — Եթէ կային քահանայք՝ որ անտարակոյս է, (նա և միաբանակեաց կրօնաւորք ի կէս Բ. դարու, ըստ վկայութեան Ստեփանոսի Օրպել, որ յարձնանքը թանահոյժ վանաց ստուգեր է զայս, և տեղոյն վանահայրն այլ Միսիթար (նշուած), շատ հաւանական է որ ըլլային տեղ տեղ և եպիսկոպոս, մանաւանդ զի այն ժամանակ եպիսկոպոս և քահանայ շատ չէր որոշուեր մէկմէկէ։ Աւելի հետաքննական է գիտնալ, թէ կար ի Հայս՝ գլուխ եպիսկոպոսաց, որ է ըսել յայրորդ Առաքելոց և Ա. շակիրտացն. — յիշեցինք ի սկզբան՝ առնոց քարոզութենէն վերջ, նորայայտ քանի մի յաշորդներ երկբայական. այլ ստոյգ մի ե-

րեւցընէ մեզ ստուգապատումն Եւսեբիոս (2. 108) ի կէս Գ. դարու, զՄեծնոստման, ոչ լոկ Հայ եպիսկոպոս այլ Հայոց եպիսկոպոս, առ որ գրեր է Ս. Դիոնիսիոս Հայրապետ Աղեքսանդրիոյ՝ վասն խնդրոյ Ալպախարուութեան. « յայնիքն, այն ժամանակ մեծ խնդիր կար եկեղեցւոյ մէջ, թէ արդեօք պէտք է ընդունիլ ի ժողովս հաւատացելոց՝ զանոնք, որ ուրացեր էին երբեմն վախով, և նորէն զղլաւով դառնային. այսպէս կ'ըսէ պատմիչն (2. 108) գրեց Դիոնիս « Եւ առ այնոսիկ՝ որ էին « յԱրմենիա, զի էր նոցա եպիսկոպոս Մի- « Ռուտման »)։ Հայրապետ մի որ գրէ առ ազգի մի եպիսկոպոս ծանր խնդրոյ մի վրայ՝ որոյ համար գրուեցաւ և առ եպիսկոպոսապետն հասարակաց՝ ի Հռովմ, հարկ է թէ այդ եպիսկոպոսն այլ թղթագրողին հաւասար կամ համեմատ ըլլայ. և ուր որ եղած ըլլայ իր աթոռն՝ շատ է որ Հայոց ընդհանրութեան կամ ազգին կամ գոնէ մեծ մասն զլեւաւոր եպիսկոպոսն էր։ Ս. Հերոնիմոս այլ ի կարգի եկեղեցական մատենագրաց յիշէ Ս. Դիոնիսիոսի գրած թուղթն առ Հայս, առանց յիշելու զանուն եպիսկոպոսին։ Ըր Գիէն (Ա, 419) կարծեօք միայն համարի, թէ Մեհրուստման՝ Մեհաստիոյ եպիսկոպոս եղած ըլլայ. այս կարծեաց հետեւած են և այլք ու մանք. բայց հաստատութիւն չկայ. Դիոնիլի է որ Դիոնիսիոս ուրիշներու գրէ՝ առ եպիսկոպոս այս կամ այն քաղաքի, իսկ մերոցս՝ ոչ քաղաքի եպիսկոպոսի՝ այլ ազգին, « Առ « այնոսիկ՝ որ էին յԱրմենիա »։ Արմենիա՝ քաղաք չէ Աշխարհ է. և խնդրոյն նիւթն այլ ցուցընէ որ բազմաթիւ ժողովուրդեան գլուխ էր այդ Մեհրուստմանդ։ Այս եկեղեցական մեծ և շփոթիլ խնդրոյն մէջ՝ մեզ ծանօթ Կեսարիոյ մեծ եպիսկոպոսն Փիլիմիլիանոս այլ հետեւելով Ս. Կիպրիանոսի՝ հակառակ կարծիք ունեցեր է քահանայապետին Հռովմայ, իսկ Ս. Դիոնիսիոս թղթագրութեամբ միջնորդ եղած է միաբանութեան, և հաստատուած է ընդունել զԱլպախարոս կամ զգարձնալսն յուրացութենէ՝ յեկեղեցի։

Այս խնդրոյս առթիւ կ'արժէ յիշել, որ նոյն ատեն ուրիշ կարեւոր խնդիրներ այլ կային. որոց մէկն էր Նոպատիանոս հակապապի հերձուածն. և այս բանիս համար այլ

1. Եւսեբ. Ե. 22. 28.

գրած է Դիոնիս ան եպիսկոպոսուն Արեւելից. ընդ որս՝ և առ Հայս գրած ըլլալուն՝ հաւանին նոր եկեղեցապատումը: — Մէկ մեծ հակառակութեան խնդիր մ'այլ էր Զատիկի տօնի օրն. զոր ումանք, (ընդ որս և Փոքր Ասիայ արեւմտեան կողմանք) Հրէից հետ նիսան ամսոյ 14ին կատարէին զայն, իսկ Եւրոպականք և Աղեքսանդրիանք՝ ի կիւրակէի որ յետ 14 նիսանի. ասոնց միարանէին և Պոնտոսի կողմանք, որոց շատ հաւանական է թէ միարանէին և սահմանակիցքն Հայք: Այս խնդիրս շատ տարի առաջ այլ յուշուած էր, և յամի 196-7, ի Պոնտոս 15 եպիսկոպոսաց ժողով մի, որոց գրաւարն էր Պարմաս կամ Պրամաս, սահմանց Հռովմայ եկեղեցւոյն միարանիլ, Կորնայ կարծօւիլ որ այս եպիսկոպոսաց մէջ գտուէր և Հայ կամ Հայոց եպիսկոպոս: — Այս յիշատակք հաւաստեն ոչ միայն այդ Բ և Գ դարուց մէջ Հայոց եպիսկոպոս ունենալը, այլ և եպիսկոպոսաց միարանելն ընդ եպիսկոպոսուն Պոնտոսի, Աղեքսանդրիայ, Անտաղայ և ընդ գլխաւորին Հռովմայ, յեական մասանոս վարդապետութեան ընդհանրական եկեղեցւոյ, եթէ և յատուկ ինչ աւանդութիւն ունէին իրենց Առաքեալներէն (Թադէոսէ և Բարդողիմեայ) ընդունած և պահած՝ մինչեւ ի ժամանակս Լուսաւորչին մերոյ: Եպիսկոպոսաց յիշատակս յայտնապէս հետեւանք է Հայոց քրիստոնէութեան այս ժամանակիս, որոյ մեծ վկայ մի եւս է նախայիշեալ Տերտուղիանոս, որ այն խօսքը չէր ըսեր՝ եթէ իր ատեն չտեսնէր ի Հայս ծաւալեալ գործադրութիւնն:

Գառնանք հիմայ նորէն մեր քրիստոնէութեան գունագոյն ծաղկանց, որ այս կիսամութ ժամանակ փայլալուին և ի Հայս, և Հայովք՝ յօտար աշխարհս. որոց անուանքն երաշխաւոր են բանիս, թէ և կըրնան օտարազգի այլ ըլլալ: Ինչպէս պարսիկ, այդ անուամբք. սակայն հաւանական է մերազգի ըլլալն, ինչպէս աշխարհածանօթ է Հայոց ամեն կողմ երթալ գալն, եթէ վաճառականութեան և եթէ այլ պատճառաւ, նա և զինուորութեամբ ի գունդս Հռովմայեցւոց: Ի սկիզբն Գ դարու (203) յիշուի Արտաշէս մի ընկերներով ողակիցեալ վասն Քրիստոսի

ի կողմանս Ափրիկիոյ. որոց յիշատակն կարգած է՝ յ'7 մարտի: Ուրիշ Արտաշէս մ'այլ նահատակուած ի Սիրմիոն (ի Պաննոնիա) յ'2 յանուարի, ժամանակն անյայտ: — Ներսէս մի նահատակեալ ի Աղեքսանդրիա (16 յուլիս), ուրիշ Ներսէս մի (15 յունիս) վեռառչաւ անուամբ վկայուէլոյ հետ, զորս յիշեն Յոյնք: Կան և Արմենիոս անուամբ վկայք, որք կըրնան կարծօւիլ իրենց ազգութեամբն այդպէս յիշուած, որպէս այն որ մօրը հետ նահատակուած է յԵփրատոս (2 յունիս), և այլն:

Գառնանք աւելի ծանօթագոյն նահատակաց և աւելի ծանօթագոյն ժամանակի նահատակաց, որ է Գ դարու կէսն, չարայիշատակ Դեկոս կայսեր ատեն (249-51), որուն լաւ յարմարի նախայիշեալ վկայութիւն Խորենացւոյ (Բ, ՀԵ): Ասոնց գլխաւոր ճաննալու է այն միակ յայտնի վկայեալ Հայոց եպիսկոպոսն Միհրատման, թէ և նահատակութեան պարագայք չեն ծանօթ:

Գառնանք Դեկոսն ի Պարսից յաղթութեամբ դառնալու ատեն (251) մեր Կորդուաց աշխարհին կողմերէն անցեր է, այն տեղ նահատակք է Մաքսիմոս և Ոյիմպիոս անուամբ երկու անձինք, չարաչար ծեծել տալով և յետոյ երկաթէ կոփիչներով վրտինին ջախջախելով. Սուրբերն Պարսիկ կ'անուանին, բայց նահատակութեան տեղն Հայոց պատկանի. օտար պատմիչք երբեքն չեն որոշեր զհայ և պարսիկ. ասոնց անուանքն այլ յունացեալ և լատինացեալ լուսին, թէ և ծանօթ է մեզ Ուղիւպ Հայ քրմի անունն: Այս վկայիցս յիշատակն դուռած է ի 15 ապրիլի: — Նոյն կայսեր ատեն նահատակուած են ի Կեսարիա՝ Գերմանոս և Թեոփիլոս երկու եւս ընկերք (3 կամ 2 նոյեմբ.) — Համանուն (Գերման) սուրբ մ'այլ Սերիմա անուամբ վկայուէլոյ հետ յիշուի (3 յուլիս) ի Տարսոն նահատակուած: — Կոռնետիան և Եսիմեի կ'եստարիս: — Այս մայրաքաղաքս մէջ կարմիր վարդուկ մ'այլ ընծայուած է սու Քրիստոս, 17ամեայ մանուկն Եփրեղ, որ լսելով միւս նահատակաց վկայութիւնը՝ Ես այլ քրիստոնեայ եմ և կ'ուզեմ վկայ ըլլալ Քրիստոսի, լսելով, կ'ուզէր երթալ յատեան, և որչափ այլ հայրն կ'արգիլէր տընէն ելնելու, նա հնարք գտաւ. և որչափ դա-

տաւորն կ'ողոթէր կամ վախճընէր, նա այլ աւելի արիւթիւն ցուցնէր. և, Փոխանակ իմ հօրս տան՝ շատ աւելի գեղեցիկ տեղ մի պիտի երթամ, կ'ըսէր: Անգուժ գատաւորն կապել տուաւ մանուկը անիծեալ կուռքի մի հետ և կրակ վառել, սպառնայով մէջը ձգել. նա միշտ նոյն խաւքերը կրկնէր մինչ տեսողքն զթալով սկսան լալ. նա ծիծաղէր անոնց վրայ. և խայտալով խնդալով մտաւ կրակին մէջ, ողջակիզեցաւ «ի հոտ անոյշ Քրիստոսի»: Յիշատակն կատարուի ի 29 մայիսի: — Գրեթէ նոյն տարին նաՀատակուեցաւ ի Նէոկեսարիա (Նիքիւսար) քանիւ երիտասարդ մ'այլ, Troadius կոչուած ի Լատինաց, որ կարծել տայ Տրոպոս անունը. երբ Կիւրեղի պէս արիարար կու շարչարուէր, քաղքին աշխարհածանօթ եպիսկոպոսն Ս. Գր. Աթանազիւսգործ՝ որ դուրս տեղ պահուածներ էր, սքանչելիօք երեւցաւ և քաջալերեց զնա: Յիշատակուի ի 28 դեկտ: Իսկ զինքը խրախուսող Ս. Հայրապետն իբր 20 տարի վերջը (270-1) խաղաղութեամբ վախճանեցաւ:

Այս ժամանակին և այս կողմերս եղած է՝ մեր եկեղեցւոյ տօնած Սկիւթացի Ս. Մերկեսիոս զօրականին նաՀատակութիւնն, որ առաջ ի Մելիտինէ շարչարեցաւ. յիշատակն ի 25 նոյեմբերի: Այս Գ. Հայոց մայրաքաղաքիս մէջ նաՀատակուեցան և երկու կտրիճ զօրականքն Նիկանդրոս և Մարկիանոս, որք զդուելով անՀաւատից բարբէն՝ թողուցին զէնքերին, և չուզեցին իրենց թոշակն առնուլ, զոր գատաւորն կ'ուզէր շնորհել. ասոր և վկայից վիճելու ատեն՝ երեւցաւ ռքանչելի կին մի, Գարիա, կինն Նիկանդրի և քաջալերէր զնա՝ որ անվախ նաՀատակուի. և անոր գատապարտուելէն վերջը՝ ետեւէն կ'երթար, փոքրիկ տղեն այլ բերելով. ընդ Հակառակն, Մարկիանոսի կինն անՀաւատ՝ յուրացութիւն յորդորէր զնա, մինչեւ ստիպուեցաւ Սուրբն փոքնտէր զնա և բարեկամի մի յանձնեց որ բռնէ և արգելէ. բայց երբ Հասան նաՀատակուելու տեղին, կանչել տուաւ, Համբուրեց, բայց, որովհետեւ դու մուրաժ ես, չես կըրնար տեսնել, ըսաւ, իմ նաՀատակութիւնս, զնա հեռաձայր աստի. իր տղենկ այլ պագնելով՝ Աստուծոյ յանձնեց. յետոյ մէկգնակ Համբուրեցին Սուրբքն: Այն վարկենին Գարիա

բազմութեան մէջ կ'աշխատէր ճամբայ բանայ որ գայ էրկանը քով. Մարկիանոս քաջեց թեւէն՝ բերաւ Նիկանդրի քով. առ որ՝ «Աստուած Հետդ ըլլայ, կանչեց կինն. տասն «տարի է որ մէկմէկէ հեռացած՝ կարօտդ «քալէի, Հիմայ որ լաւագոյն կենաց կ'երթաս» շատ ուրախ եմ մարտիրոսի կին ըլլալու. զօրացիր, և խնդրէ Աստուծէ որ «գիտ այլ աղատէ»: Հազիւ խոսքը կատարեց, դահինն նաՀատակաց երեսը կտաւով մի ծածկելով, կտրեց ձգեց զլուխին: Ոմանք կարծեն թէ Գարիա եւս նաՀատակուած է. և թէ երեքին այլ և Նիկանդրի դակին մարմինքն այլ բերուած են յիտալիա, և Կապուա մեծ քաղաքի մտա Վենաֆրոյ փոքր քաղաքի մէջ ամփոփուած: Ատոնց յիշատակն կատարուի ի 17 յունիսի: Ոմանք փոխանակ Գեկոսի՝ Դիոկղետիանոսի ատեն կարծեն ասոնց նաՀատակութիւնը:

Մելիտինեցի կամ ի Մելիտինէ նաՀատակուի՝ բայց Հայ ճանչցուած և այսպէս կոչուած մի, մինչեւ Հիմայ պատուի և տօնուի Նարոյիկ երկրին Կաղանիա պատահի: Այլի Ռեպէ քաղաքին մէջ. յատուկ եկեղեցի մի նուիրուած է իրեն. անունն լատինաբար կուռքի Expeditus, որ անշուշտ թարգմանուած է բնիկ լեզուէն. այլ թէ Խնէր էր այն կամ մեր լեզուաւ, չէ յայտ. որովհետեւ այդ բառդ կըրնայ նշանակել Ազատ կամ Երազ, և յետինս յարմար Համարուի, իբրեւ թեթեւագէն զօրականներու, որք չուտ քայլելով կ'երթային: Աւանդութիւնն նոյն իսկ Մելիտինեան Շտնթաձիգ լեզունին գնդապետ կարծէ զՍուրբս. նաՀատակութեան պարագայք և ժամանակն այլ անծանօթ են: Աւել յիսուն տարի առաջ յիշեալ իտալական քաղաքին եկեղեցականք՝ մեզի իբրեւ ազգայնոց Սրբոյն՝ Հարցուցին թէ արդեօք ծանօթ է. այլ չէր: Յիշատակն՝ կատարուի յ'19 սպրիլի: Անունն կըրնայ եւս Հայ բառէ մի աւրուած ըլլալ, ինչպէս Ապետ, Սպետ: Այս եղբի տարին երս Սրբոյն պայտօնն կամ պատին շատ արծարծեցաւ, մանաւանդ ի Մարսիլիա. մեծ կամ զժուարին խնդրոց լուծիչ և ազատիչ ճանչնալով և առ նա դիմելով ջերմեռանդութեամբ. — Մելիտինեայ նաՀատակաց Հուշակագոյնք են Ս. Պոլիէպտիս և Նիքարիոն

(Նոր իշխան), նոյն Գեղոս կայսեր հալածանաց ժամանակ. ասոնց երկնաւոր փառքը՝ յերկրի կամ ի դպրութեան այլ անմահացուց փռանկ բանաստեղծն Գրոնէլլ՝ իր գերահընչակ թատերական որերգութեամբն: Այս սրտաց յիշատակն կատարուի ի 13 փերը:

Թողլով Հետաքննել այս Գ դարու կիսում Գեղոսեան մեծ հալածանաց յեղանակին վերկայեալքն ի սահման Հայոց, իննանք նոյն դարուն երրորդ քառորդին միջոց՝ Արեւիկանոս կայսեր նորոգած հալածանաց ատեն քանի մի վկայելոց՝ նոյն սահմանաց մէջ, և մանաւանդ զխաւորին՝ որ ի Կեսարիա. ուր ամենէն հռչակաւորն ի ժամանակիս եղաւ Ս. Մամեան, սուր խոստովանողաց որդի, անոնց բանտարկութեան ատեն ծնած ի Գանգրա (Չանկըրը), և բարեպաշտ դայիկի մի ձեռք սնած, զոր ստէպ Մամեան կանչելուն համար՝ սրուած կ'ըսուի իր անունն. աղալութեան ստեղծ րոնուած և նեղուած յանգութ դատաւորաց, բայց Աստուծոյ աքանչելի նախախնամութեամբն ապաստած և Կեսարիոյ կողմերէ բերուած. ուր՝ շատ տարի հովուութեամբ ապրեի է, ո՛ր միայն ընտանի անասուններ դարմանելով, այլ և զագաններն ընտանեցնելով՝ իր անոյշ երգերովը. իսկ յետոյ դարձեալ հալածչաց ձեռք ընկնալով և շատ չարչարանօք և քարկոծուելով՝ իր ծնողաց պակակից եղբի է. Ս. Բարսեղ, Ս. Գր. Աստուածարան և այլք՝ շատ գուրգուրանօք դրուատեն զՄամեան. Յուդիանոս յառաջ քան զուրացութիւնն՝ իր եղբոր Գալլուի Հետ ուղեր են մեծ եկեղեցի մի շինել ի Կեսարիա յանուն Սրբոյս, կէս կէս բաժնելով, Գեղոսիանոսի շինել տուածն միտ քաղաւոր է: — Սրբոյս յիշատակն դրուած է ի Յայսմաւուրս մեր յ'2 սեպտեմբ. Լատինք տօնեն յ'17 օգոստ:

Այս ժամանակիս Հանդիպած է (275) և նահատակութիւն գգուելի Սրբոյ մի ի Կոմանայ Հայոց. որոյ ազնուականներէն մէկն էր. Ղլիքսանդր անուամբ. Աւետարանի խաւտոց Հետեիլ ուղեւով՝ ստացուածքը բաժնեց աղքատաց, և ինքն այլ աղքատորէն ապրիլ ուղեւով ընտրից անարդ արուեստ մի, ածուղ գործել և ծախել, և դարձեալ ողորմութիւն տալով սիրան այլ Աստուծոյ ըծայիլ, Փաղթին

եպիսկոպոսն վախճանելով՝ յաջորդին ընտրութեան համար հակառակութիւն կ'ըլլար. Ս. Գր. Աթանէսիագործի յայտնեց Աստուած այս անգագործ Սուրբը, որ ստիպեց և ձեռնադրեց եպիսկոպոս. քիչ տարի վերջը նահատակեցաւ նոյն քաղթին մէջ, Յիշատակն ի 11 օգոստ. Գր. Կաղիանդացի ներբողեր է զսա՝ արժանապէս:

Հայոց քրիստոնէութեան արշալուսոյն վերջեր և արեւածագին խառնուած՝ պայծառ և փափուկ կարմիր նոյլ մ'ընծայած է Եկեղեցաց գաւառին սալմանն, Մայնոնեաց կամ Մայնոնեաց ցեղէն, գորովաբար սիրուն երիտասարդ նահատակ մի, « Աջօքն թուի, « և գանգրաւոր, և երեսօքն խարտեալ, և « անձամբն երկայն ». որդի Մուքիս իշխանի և Աղաւթի, որոյ յունական անունն երաշխաւորէ՝ նոյնպիսի արիւն մ'այլ խառնելն ի հայկականին, և այնպիսի կրթութիւն մ'այլ տալ իր որդեկին, զոր և Արեւադարձ անուանած էին, իրբեւ տուրք Աթենասայ, որ այլով անուամբ պաշտուէր ի Հայոց՝ այն կողմերը. Սուրէն անոր պաշտող էր, կիսն քրիստոնեայ, որ իր Հետաւոր՝ կաթին Հետ տուէր էր որդեկին. և այնչափ աւելի գուրգուրապ վրան՝ որչափ որ բաց ի շնորհաց դաւակին՝ նա և ասոր ցաւագարութիւնն իր սրտին խոց էր. այս տկարութեան պատճառաւ Աթենագորոս անաշխատ կեանք կ'անցունէր, բաց օգուտակ և յառանձնութեան բնութեան. ուր կային ծածուկ քրիստոնեայք, և Դասիկ անուամբ քահանայ մի հոգոր գանոք. պատանին այլ լռելով անոր խրատները և քրիստոնէից վարքը տեսնելով՝ անոնցմէ չէր բաժնուէր: Բայց Հորմէն վախճալով չէր համարձակեր յայտնել իր հաւատքը. և երբ Հայրն ստիպէր զնա կուտքերը պաշտելու, իր հիւանդութիւնը պատճառելով՝ հրաժարէր, միկեւ շատ տարի վերջ իմացաւ Հայրն, և յետ ողբանաց մահ սպանուեցաւ:

Այս ժամանակ Հանդիպած է, ըստ աւանդութեան, մեր Լուսաւորչի այլ յայտնելն իր հաւատքը. և այս կողմերէն անցած ստեղծ իմանալով զայս Դասիկէն՝ յորդորեց զսա որ մկրտէ այդ երիտասարդը, (զի գեւ չէր մկրտուած). և աւագանին ջրով լուացուելէն քիչ օր վերջը՝ գութով խելագարեալ կամ ան-

գուժ Հայրն Սուրեն՝ իր ձեռք զորդին ա-
րեամբն այլ լուաց, Սեղեմիտոս կոչուած հով-
տին մէջ. ինքն այն խելագարութեամբ կամ
դիւահարութեամբ կորուս. իսկ կինն Աղուիթա
որդւոյն գերեզմանէն շրթնուելով՝ այն տեղ
Հանգչեցաւ, և հոգեով միացաւ. ընդ որդւոյն,
որ յետ մկրտութեանն Թեոփորոս կոչուեցաւ.
որդարեւ Աստուածատուոյ. և նահատակու-
թեան տեղն եղաւ արժանապէս ուխտատեղի,
զոր և այլազգիք պատուէին մինչեւ ի վեր-
ջին ժամանակս, Սրբոզը Թորոս կոչելով:
Այս վկայիս պատմութիւնն ամեն Յայամ-
աւորաց մէջ չի գտուիր, բայց կայ և ա-
ռանձին հաւաքմանց մէջ գրուած. յորոց
նշանակուի իրր 266ին ծնած և 296ին նա-
հատակուած. իր յիշատակն այլ գրուած ի 11
մայիսի. զոր և արժան էր տարուէ տարի
սոնախմբել Հանդիսապէս, իրբեւ անդրանիկ
կամ մի յանդրանիկ Հարազատ նահատա-
կաց մերոց. Թերեւս շատ ծանօթ չըլլալուն
համար՝ տօնացուցի մէջ չէ անցած. բայց ի
պատմութեանն և մանրամասն գրպաց և տե-
ղեաց յիշատակներէն՝ անտարակոյս է իրն.
և միանգամ եւս ստիպէ զմեզ կրկնել և յի-
շել, որ քրիստոնէութիւնն չէ իսպառ նուազած
ի Հայո՝ յԱռաքելոց անտի մինչեւ ի նոր
առաքելոյն մեր Ս. Գր. Լուսաւորիչ. և թէ,
ոչ միայն քահանայք կային Հաւատացելոց
հոգացողք, այլ և զլուսիք քահանայից՝ եպիս-
կոպոսք: Այս բանիս յայտնի վկայէ Սիմեոն
անուամբ սովաւած անթի բայց բաւական հին
գրիչ մի Լուսաւորիչ վրայօք, թէ՛ և ի հալա-
ծանաց ժամանակին « Գոյին ի տեղիս տեղիս
« յԱռաքելոցն անտի (յաջորդեալ) եպիսկո-
պոսք և քահանայք՝ գաղտնի »:

Շարայարեղի

Հ. Ղ. Վ. Մ. ԱՆԻՇԱՆ

* Յաջորդ էջերուն տպագրութեան դիւրու-
թեան և ներկայ յորուածիս առաւելագոյն պար-
զութեան համար՝ Յօրուածիս մասին մեր ընե-
լիք դիտողութիւնները Թողուցինք հետեւեալ
հատուածոց:

1. VET. TEST. GRAEC., Praef., cap. IV. Versio
armena.

2. Not with desirable accuracy nor from
the oldest MSS. (Scrivener, p. 151).

3. Ձեռագրաց մասին Հմմտ. Scrivener, և
մանաւանդ Gregory.

ՔՆՆԱԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐՈՑ ՀԱՅԱԿԱՆԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՅ:

(D^r. V. ERMONI, DE LA MISSION

DES LAZARISTES, PARIS).

(Շար. տես յէջ 296)

Ք

ՔՈՐՈՐԻ ԹԻՒՆ ԲՈՎԱԳՐԻՈՒՄ*.

ԵՊԷՏ և վերոյիշեալ պատմական մա-
սին մէջ քննադատութիւնն դեռ եւս ստոյգ
կէտի մը հասած չէ, բայց, եթէ քննենք թէ
Հայկական Թարգմանութիւնն ինչ քնադրի
վրայ եղած է, բացարձակապէս ստոյգ ար-
դիւնք մը կամ հետեւանք առաջ կու գայ:
Այլ այդ կնճոտ քննութեան մէջ կարգաւ
առաջ երթալու համար՝ առաջարկութեանս
խորաքանչիւր մասերը յաջորդաբար աչքէ
պիտի անցընենք:

Իսկ այս մասին ձեռք զարնելէն առաջ,
տեսնենք այլ և այլ քննախիտաց արդիւնքը:
Հայկական Թարգմանութեան առաջին հա-
մեմատութիւնը կատարած է Հօլմէս, իրեն
Էթթանանից հրատարակութեան մէջ¹:
Դիթաղաբար, ըստ այժմեան քննադատու-
թեան², շատ պակասաւոր է այդ համեմա-
տութիւնը: Եւ Հօլմէսի համեմատութեան
թերի ըլլալուն իրբեւ օրինակ մը՝ կը բաւէ
հետեւեալը. այսինքն, Հնգամստինի 3 թ.
ձեռագիրն, զոր Հօլմէս 1063 տարւոյն կը
համարէր, իրօք ԺԸ զարու ձեռագիր մ'է:
— Դիշընտօֆի՝ Նոր կտակարանի համե-
մատութեան մէջ յոյժ մեծ յառաջդիմու-
թիւն կ'երեւի. և ըստ կարեւոյն խնամով
եղած է. սակայն վերջնական և վճռական
չի կրնար երթադրուիլ, վասն զի հին ձեռա-
գրաց համաձայնութեան վրայ հիմնուած չէ:
Այժմ կը կարծուի՝ թէ ԺԹ դարէն կանխա-
գոյն Հայկական ձեռագիր³ չկայ Աստուա-
ծաշնի:

Գրանանք այժմ ուղղակի խնդրոյն: